## ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂԱԾ 70-ԱՄԵԱՅ ՇՈՒՇԵՑԻ ՊԱՌԱՒ ԿՆՈՋ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ*).

Վեհափառ Տէ՛ր,

*Ինքս 70-ամեայ մի պառաւ և աղքատ կին եմ, մեր ազգի տառապանքները ինձ անչափ ցաւ են պատճառում, բայց ձեռքովս ոչինչ անել չի գալիս։ Ուստի իմ մէջքով 300 կուժ ջուր կրելով և վաճառելով, ստացել եմ 3 րուբլի (կուժը 1 կոպէկով), որը ուղարկում եմ Ս. Օծութեանդ, խոնարհաբար խնդրելով գործածել ըստ Ձեր բարեհայեցողութեան։*

*Խ. Ծ. Թամարա Խաչատրեանց*

*19 Հոկտեմբերի 1915 ամի*
Շուշի։

---

*) *Տպում ենք այս ինքնուրոյն նամակը Շուշեցի աղքատ պառաւ կնոջ՝ որի սրտաբուղխ և միանգամայն անձնուէր մասնակցութիւնը ազգային աղէտների սփոփանքի գործում մի մեծ խրատական դաս և յանդիմանութիւն պէտք է լինի այն բոլոր հայ կանանց համար, որոնք ազգային այս ծանր օրերում գլանում են իրենց նիւթական և բարոյական աջակցութիւնը ցոյց տալ տառապեալներին, շարունակելով զբաղուել իրենց արդուզարդով և շռայլ կեանքով։*

Խմբ. «Արարատի»

«Արարատ»ի խմբագրութիւնը գրախօսականի համար շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նոր հրատարակութիւնները։

1) Հայերի ազատագրական շարժումները ԺԹ. դարում, գրեց Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանց, գինն է 40 կոպ.

2) Հրապարակախօսական Մանկունք Ա. գրքոյկ, գրեց Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանց, գինն է 30 կոպ.

3) Հառաչանք, գրեց Վարդան Քամալեան, գինն է 30 կոպ.

4) Ցոլքեր, (ինքնուրոյն և թարգմանական) Մ. Վ. Մաքսուդեանց, գինն է 50 կոպ.

5) Отчетъ Нахич. Ростов. на Дону Армянск. Комитета.